ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԱԶԳԱՅԻՆ ՊԼԱՏՖՈՐՄ

P192007, 20.02.2019թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղուկասյան,

Ինչպես գիտեք Կայուն զարգացման նախաձեռնությունների «Աստղացոլք» հասարակական կազմակերպությունը, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով ազգային պլատֆորմի հետ համագործակցությամբ, «ՀԻՄԱ՝ հանրային միջոցները՝ հանուն երեխաների իրավունքների պաշտպանության» ծրագրի շրջանակներում իրականացնում է Տավուշի, Գեղարքունիքի և Լոռու մարզերի մարզպետարանների բյուջեների մոնիթորինգ: Միաժամանակ իրականացվում է նաև 6 քաղաքային համայնքների բյուջեների ուսումնասիրություն: Ծրագիրն իրականացվում է ԵՄ համաֆինանսավորմամբ:

Շնորհակալություն եմ հայտնում Ձեր կողմից տրամադրած նախորդ տեղեկատվության համար, և խնդրում եմ Ձեզ, պատասխան նամակով տրամադրել նաև տեղեկատվություն, 2018 թվականին մարզպետարանի բյուջեից ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ բաժնի, ԱՅԼ ՆՊԱՍՏՆԵՐ ԲՅՈՒՋԵԻՑ հոդվածի (4729 տողից) ֆինանսական հատկացումների բացվածքը՝ ըստ դասակարգման (առողջական խնդիրների համար, անաշխատունակություն, ծերություն, հարազատին կորցրած անձինք, գործազրկություն, բնակարանային ապահովում, սոցիալական հատուկ արտոնություններ և այլն), նշելով ֆինանսական հատկացման նպատակը, ֆինանսական հատկացման չափը, շահառուների քանակը և այլն:

Խնդրում եմ տրամադրել նաև տեղեկատվություն, թե ինչ ընթացակարգով կամ մեխանիզմով է որոշվում ֆինանսական միջոցների հատկացման կարգը (օրինակ՝ մարզպետի որոշմամբ, մարզպետին կից գործող խորհրդի որոշմամբ, համապատասխան չափորոշիչներով և այլն):

Ծրագրի տևողությունը վեց ամիս է: Ուստի ժամկետի սղությունից ելնելով, խնդրում եմ պատասխանել գործող օրենսդրությամբ սահմանված հնարավորինս սեղմ ժամկետում:

Հարգանքով և հետագա համագործակցության ակնկալիքով՝

ՍՈՒՐԵՆ ՄԱՂԱՔՅԱՆ
ՊԼԱՏՖՈՐՄԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ

ՀՀ. ք. Երևան,0056, Նորքի 3-րդ զանգված, Բաղյան 2, Հեռ. + 374 99 22 33 07
Էլ.փոստ՝ armdisabilityplatform@gmail.com , Կայք էջ http://www.armdisabilityplatform.com/